«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 **հոկտեմբերի** 2018 **թվականի**

2018-2019 **ուսումնական տարվա ընդունելության**
արդյունքների մասին

Լսելով և քննարկելով «2018-2019 **ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին**» հարցը (զեկուցող՝ ընդունող հանձնաժողովի նախագահի տեղակալ, ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. ընդունող հանձնաժողովը գործել է ՀՀ կրթության և գիտության նախարարության հաստատած կանոնակարգի պահանջներին համաձայն: Ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ առկա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 926 տեղ, որից 66-ը՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ (այդ թվում 9-ը՝ ԲՋ), 866-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ ընդունվել է 61 (այդ թվում 2-ը՝ ԲՋ, 4-ը՝ արտոնությունով) դիմորդ, իսկ վճարովի ուսուցման համակարգում՝ 333 դիմորդ: Վճարովի ուսուցման համակարգ ընդունված ևս 6 ուսանողի ուսման վարձը փոխհատուցվել է բուհի կողմից: Սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով ընդունվել է 11 դիմորդ: Այսպիսով՝ առկա ուսուցման բակալավրիատ է ընդունվել 411 դիմորդ:

Առկա ուսուցման մագիստրատուրայի ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ (անվճար) ուսուցման համակարգ է ընդունվել 97 դիմորդ (այդ թվում 5-ը՝ ԲՋ, 2-ը՝ ԼՂՀ-ին հատկացված տեղերի հաշվին): Վճարովի ուսուցման համակարգ է ընդունվել 204 դիմորդ, որից 5-ը ընդունվել են պետության կողմից սահմանված արտոնություններով և ստացել ուսման վարձի լրիվ փոխհատուցում: Այսպիսով՝ առկա ուսուցման մագիստրատուրա է ընդունվել 301 դիմորդ:

Հեռակա ուսուցման մագիստրատուրա է դիմել 258 դիմորդ (հատկացվել է 330 տեղ). ընդունվել են 243-ը:

Հեռակա ուսուցման բակալավրիատ է դիմել 136 դիմորդ (հատկացվել է 520 տեղ). ընդունվել են 105-ը: Սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով ընդունվել է 3 դիմորդ: Այսպիսով՝ հեռակա ուսուցման բակալավրիատ է ընդունվել 108 դիմորդ:

Ելնելով վերոգրյալից՝ համալսարանի գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. 2018-2019 ուսումնական տարվա ընդունող հանձնաժողովի աշխատանքը գնահատել բավարար:

2. Հանձնարարել ուսումնական բաժնին, համապատասխան կրթական ծրագրեր իրականացնող ամբիոններին՝ մինչև 2019 թվականի փետրվարի 1-ը ուսումնասիրել կոնկրետ մագիստրոսական կրթական ծրագրերից ուսանողների հրաժարվելու (չդիմելու) պատճառները և առաջարկներ ներկայացնել կա՛մ դրանք աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու կա՛մ փակելու վերաբերյալ:

3. Հանձնարարել շարունակական կրթության և կարիերայի բաժնին՝ մինչև 2019 թվականի փետրվարի 15-ը ուսումնասիրել դիմորդների ՀՊՏՀ դիմելու դրդապատճառները, հարստացնել ապագա դիմորդներին համալսարանի կայքի միջոցով տրվող տեղեկատվությունը և կատարելագործել դրա տրամադրման ձևերն ու կառուցակարգերը:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Մ.Ն.Հարությունյանին և Ս.Ս.Խաչատրյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

2018 թ. Հոկտեմբերի 31
Երևան